Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

With funding from

Austrian Development Cooperation

ԽԱՂՈՂԻ ԱՐԺԵՔՂԹԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հաշվետվություն

Հանրային

Implemented by:

giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

VINE & WINE FOUNDATION OF ARMENIA

Հաշվետվությունը պատրաստվել է Մոդեքս խորհրդատվական ընկերության կողմից «Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հայաստանում» ծրագրի շրջանակում, որը պատվիրակված է Գերմանիայի կառավարության կողմից:

Մոդեքս խորհրդատվական ընկերություն
Հասցե՝ Երևան, 0010, Նալբանդյան 48/1
Կայք՝ www.modex.am
Էլ. փոստ՝ info@modex.am
Հեռախոս՝ +374 91 200882

Բովանդակություն

04
Ներածություն

05
Ամփոփագիր

06
Խաղողագործությունը Հայաստանում

10
Գինու և կոնյակի արտադրությունը Հայաստանում

13
Խաղողի արժեշղթայի արտահանումը

19
Զբաղվածությունը գինու և կոնյակի արտադրության ոլորտներում

24
Գինու և կոնյակի արտադրության ոլորտներում վճարված հարկերը

27
Գինու և կոնյակի արտադրության ոլորտների շրջանառությունը

33
Խաղողի արժեշղթայի ավելացված արժեքը

Ներածություն

Այս ուսումնասիրության նպատակն է գնահատել խաղողի արժեշղթայի տնտեսական ազդեցությունը Հայաստանում: Ուսումնասիրության ժամանակաշրջան է վերցվել 2022-2024 թվականները: Ելնելով սահմանված նպատակից՝ սահմանվել են հետևյալ **խնդիրները՝**

- ✔ Ուսումնասիրել խաղողագործությամբ զբաղվող տնտեսությունների թիվը, դրանց բաշխվածությունն ըստ մարզերի, խաղողի համախառն արտադրանքը, խաղողի տնկարկների ընդհանուր մակերեսը, բերքատվությունը և այլն,
- ✔ Ուսումնասիրել Հայաստանում խաղողի գինու և կոնյակի արտադրանքի ծավալները,
- ✔ Վերլուծել խաղողի, չամիչի, գինու, կոնյակի արտահանումը ու արտահանման հիմնական շուկաները,
- ✔ Գնահատել գինու և կոնյակի արտադրության ոլորտներում զբաղվածությունը, ներառյալ աշխատողների թիվը և վարձատրության մեծությունը,
- ✔ Գնահատել գինու և կոնյակի արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների վճարած հարկերը,
- ✔ Գնահատել գինու և կոնյակի արտադրությամբ զբաղվողների տարեկան շրջանառությունը,
- ✔ Գնահատել խաղողի արժեշղթայում ձևավորված համախառն ավելացված արժեքը և դրա մասնաբաժինը երկրի համախառն ավելացված արժեքի կառուցվածքում:

Ուսումնասիրությունը իրականացվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ), ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ), ՄԱԿ-ի ապրանքային առևտրի վիճակագրական շտեմարանի (UN Comtrade), և այլ տվյալների հիման վրա:

Հաշվետվությունը բաղկացած է հետևյալ **բաժիններից՝** ներածություն, ամփոփագիր, խաղողագործությունը Հայաստանում, գինու և կոնյակի արտադրությունը Հայաստանում, խաղողի արժեշղթայի արտահանումը, զբաղվածությունը գինու և կոնյակի արտադրության ոլորտներում, գինու և կոնյակի արտադրության ոլորտներում վճարված հարկերը, գինու և կոնյակի արտադրության ոլորտների շրջանառությունը, խաղողի արժեշղթայի ավելացված արժեքը:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Ամփոփագիր

- 2024 թվականին Հայաստանում խաղողագործությամբ են զբաղվել **12,412 գյուղացիական տնտեսություններ, ընդհանուր՝ 15,423 հա**: Գինու և կոնյակի արտադրությամբ զբաղվող **տնտեսավարողների թիվը կազմել է 206**, որոնցից 164-ը (80%) զբաղվել են գինու արտադրությամբ, 34-ը՝ կոնյակի ատադրությամբ, իսկ 8 տնտեսավարող միաժամանակ արտադրել են և՛ գինի, և՛ կոնյակ:
- 2024 թվականին Հայաստանում արտադրվել է **196 հազար տոննա խաղող՝** 30 հազար տոննայով քիչ, քան 2022 թվականին, որը կազմել է գյուղատնտեսական համախառն արտադրանքի 2.8%-ը:
- 2022-2024 թվականներին ՀՀ-ում 28%-ով կամ **38-ով ավելացել են գինու արտադրությամբ զբաղվողները** (ԱՁ, ՍՊԸ և այլն):
- 2024 թվականին գինու և կոնյակի արտադրությամբ զբաղված ընկերությունները **պետական բյուջե են վճարել շուրջ 14.6 միլիարդ դրամի հարկ և այլ պարտադիր վճարներ,** որից՝ 12 միլիարդ դրամը կոնյակի արտադրության գծով, 2.6 միլիարդ դրամը՝ գինու արտադրության գծով: 2022 թվականի համեմատ 2024 թվականին վճարած հարկերի մեծությունն ավելացել է 4.5%-ով: 2024 թվականի դրությամբ 1000 խոշոր հարկատուների ցանկում ընդգրկված են եղել ոլորտի 12 ներկայացուցիչ:
- 2024 թվականին **Հայաստանից արտահանվել է գրեթե 350 միլիոն դոլարի** խաղող, չամիչ, գինի, կոնյակ, որի ճնշող մեծամասնությունը՝ 311 միլիոն դոլար, եղել է կոնյակի արտահանումը: Այս արժեշղթայում արտահանման 80%-ից ավելին բաժին է ընկնում Ռուսաստանին:
- 2022-2024 թվականներին գինու արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների տարեկան **շրջանառությունը ավելացել է 30%-ով՝** հասնելով 17 միլիարդ դրամի, իսկ կոնյակի արտադրությամբ զբաղվողների շրջանառությունը՝ 15%-ով՝ կազմելով 127 միլիարդ դրամ: Ընդ որում՝ և՛ կոնյակի, և՛ գինու արտադրության ոլորտներում **շրջանառության գերակշիռ մասը ապահովում են ամենախոշոր 10 տնտեսավարողները** (կոնյակի արտադրության դեպքում՝ 84%-ը, գինու արտադրության ոլորտում՝ 68%-ը):
- ՊԵԿ-ի տրամադրած տվյալների հիման վրա իրականացված գնահատականները ցույց են տալիս, որ 2024 թվականին **կոնյակի շուկայի ծավալը կազմել է 785 հազար լիտր՝** 38%-ով ավելի, քան նախորդ տարի, իսկ **գինու շուկայի ծավալը կազմել է 4 միլիոն 345 հազար լիտր՝** 6%-ով ավելի քիչ, քան նախորդ տարի և 2%-ով ավել, քան 2022 թվականին:
- 2024 թվականին խաղողի արժեշղթայի **նպաստումը երկրի համախառն ավելացված արժեքին** կազմել է շուրջ 0.5%՝ 0.6%-ային կետով պակաս, քան 2022 թվականին: Համեմատության համար՝ 2024 թվականին գինու և կոնյակի արտադրության ոլորտներում վճարված հարկերն ընդհանուր հավաքագրված հարկերի կառուցվածքում կազմել են 0.5%:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Խաղողագործությունը Հայաստանում

Խաղողագործությամբ զբաղվող գյուղատնտեսական տնտեսությունների թիվը, 2024



Աղբյուր՝ Բրեվիս

Խաղողի համախառն արտադրանքը, 2022-2024



Աղբյուր՝ Արմստատ

2024 թվականին Հայաստանում խաղողագործությամբ զբաղվող գյուղատնտեսական տնտեսությունների թիվը կազմել է **12,412**:

Խաղողագործությամբ զբաղվողների թվով առաջատարը Արարատի մարզն է (4,204), որին հաջորդում են Արմավիրը (3,064) և Տավուշը (2,598):

2024 թվականին Հայաստանում խաղողի համախառն արտադրանքը կազմել է շուրջ **196 հազար տոննա**, ինչը զիջում է 2023 և 2022 թվականների արտադրանքի ծավալը՝ համապատասխանաբար 13%-ով և 8%-ով, իսկ մասնաբաժինը գյուղատնտեսական համախառն արտադրանքի կառուցվածքում 3.0%-ից հասել է 2.8%-ի:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Խաղողի տնկարկների ընդհանուր մակերեսը Հայաստանում

Խաղողի տնկարկների ընդհանուր մակերեսը և բերքատվությունը, 2022-2024



Աղբյուր՝ Արմստատ

Խաղողի տնկարկների բաշխվածությունն ըստ մարզերի, 2024



Աղբյուր՝ Արմստատ

2024 թվականին Հայաստանում խաղողի տնկարկների ընդհանուր մակերեսը եղել է **15,423 հա**՝ 2022 թվականի համեմատ կրճատվելով շուրջ 5%-ով: Խաղողի տնկարկների բերքատվությունը 1 հեկտարից կազմել է 136 ցենտներ՝ 2022 թվականի համեմատ կրճատվելով 9%-ով:

2024 թվականին Հայաստանում խաղողի տնկարկների **41%-ը (6,259 հա)** տեղաբաշխված էր Արմավիրի մարզում, 31%-ը (4,731 հա) Արարատի մարզում, 10%-ը (1,482 հա) Արագածոտնի մարզում, իսկ 9%-ը (1,317 հա) Տավուշի մարզում:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Խաղողի իրացումը Հայաստանում

Խաղողի վաճառքի իրականացման տեսակները, 2024

տնտեսավարող



Աղբյուր՝ Բրեվիս

Խաղողագործությամբ զբաղվող գյուղատնտեսական տնտեսությունների շրջանում իրականացված հարցումը ցույց է տալիս, որ տնտեսությունների 20%-ը չի վաճառում ստացված բերքը: 37%-ի դեպքում խաղողի վաճառքի իրականացվում է ըստ առկա պայմանագրերի, 23%-ի դեպքում՝ առանց պայմանագրերի, 20%-ի դեպքում՝ և՛ պայմանագրով, և՛ առանց պայմանագրի, իսկ ևս 20%-ը չի վաճառում ստացված բերքը:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

ԳԻՆՈՒ ԵՎ ԿՈՆՅԱԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գինու և կոնյակի արտադրությունը Հայաստանում

Խաղողի գինու և կոնյակի արտադրության ծավալը, 2022-2024



Աղբյուր՝ Արմստատ

2024 թվականին Հայաստանում արտադրվել է **19,918 հազար լիտր կոնյակ (100%-անոց սպիրտին համարժեք)** և **9,793 հազար լիտր խաղողի գինի**: 2022-2024 թվականների ընթացքում կոնյակի արտադրության ծավալը կրճատվել է 7%-ով:

Գինու արտադրությունը 2023 թվականին նախորդ տարվա համեմատ աճել է 20%-ով և հասել 14,262 հազար լիտրի, սակայն հաջորդ տարի զգալիորեն կրճատվել է: 2024 թվականին Հայաստանում գինու արտադրության ծավալը կազմել է 9,793 հազար լիտր՝ 31%-ով ավելի քիչ, քան 2023 թվականին և 18%-ով ավելի քիչ, քան 2022 թվականին:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Գինու և կոնյակի արտադրությամբ զբաղվող տնտեսավարողները Հայաստանում

Խաղողի գինու և կոնյակի արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների թիվը, 2022-2024



Նշում՝ այն տնտեսավարողները, որոնք որևէ չափով շրջանառություն են գրանցել նշված տնտեսական գործունեությունների մասով,

Աղբյուր՝ ՊԵԿ

2024 թվականին Հայաստանում գինու և կոնյակի արտադրությամբ զբաղվող **տնտեսավարողների թիվը կազմել է 206** (ԱՁ, ՍՊԸ և այլն), 14%-ով կամ 25-ով ավել, քան 2023 թվականին և 24%-ով կամ 40-ով ավել, քան 2022 թվականին:

2024 թվականին գինու և կոնյակի արտադրությամբ զբաղվող 206 տնտեսավարողներից **164-ը (80%) զբաղվել են գինու արտադրությամբ**, 34-ը՝ կոնյակի ատադրությամբ, իսկ 8 տնտեսավարող միաժամանակ արտադրել են և՛ գինի, և՛ կոնյակ:

2022-2024 թվականներին Հայաստանում ավելացել են գինու արտադրությամբ զբաղվողները: 2024 թվականին՝ 2022 թվականի համեմատ, գինու արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների թիվը աճել է **28%-ով** կամ 38-ով:

2024 թվականի դրությամբ գործող 206 տնտեսվարողներից 92-ը գործել են Երևանում, 35-ը՝ Արարատում, 30-ը՝ Վայոց ձորում, 18-ը՝ Արմավիրում:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

ԽԱՂՈՂԻ ԱՐԺԵՔՂԹԱՅԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

Հայաստանից գինու արտահանումը

Գինու արտահանումը, 2014 և 2022-2024



Աղբյուր՝ Արմստատ

Գինու արտահանումն ըստ ներմուծման երկրների, 2022-2024



Աղբյուր՝ UN Comtrade

2024 թվականինՀայաստանից արտահանվել է **17 միլիոն 735 հազար ԱՄՆ դոլարի** կամ **4 միլիոն 255 հազար լիտր** խաղողի գինի, ինչը շուրջ երեք անգամ գերազանցում է 2014 թվականի ցուցանիշը:

2022-2024 թվականներին խաղողի գինու արտահանումը դոլարային արտահայտությամբ **նվազել է 6%-ով,** իսկ բնեղեն արտահայտությամբ՝ **11%-ով**:

Ռուսաստանը շարունակում է մնալ Հայաստանից արտահանվող խաղողի գինու հիմնական ներմուծողը: 2024 թվականին Հայաստանից արտահանվող գինու 73%-ը ուղղվել է Ռուսաստան, որին հաջորդում է ԱՄՆ-ն՝ 13% մասնաբաժնով:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Հայաստանից կոնյակի արտահանումը

Կոնյակի արտահանումը արժեքային արտահայտությամբ, 2014 և 2022-2024



Աղբյուր՝ Արմստատ

Կոնյակի արտահանումը բնեղեն արտահայտությամբ, 2014 և 2022-2024



Աղբյուր՝ Արմստատ

2024 թվականինՀայաստանից արտահանվել է **311 միլիոն ԱՄՆ դոլարի** կամ **37,950 հազար լիտր** կոնյակ, իսկ մասնաբաժինը ընդհանուր ապրանքային արտահանման կառուցվածքում կազմել է 2%:

2014 թվականի համեմատ 2024 թվականին կոնյակի արտահանումը դոլարային արտահայտությամբ գրեթե **կրկնապատկվել է**, իսկ բնեղեն արտահայտությամբ՝ **եռապատկվել**:

2022-2024 թվականներին Հայաստանից կոնյակի արտահանումը դոլարային արտահայտությամբ աճել է **14%-ով**, իսկ բնեղեն արտահայտությամբ՝ **58%-ով**:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Հայաստանից կոնյակի արտահանումը

Կոնյակի արտահանումն ըստ տարրայի տեսակի, 2022-2024



Աղբյուր՝ Արմստատ

2024 թվականին Հայաստանից արտահանված կոնյակի **60%-ը** բաժին է հասել 2 լիտրից պակաս տարողունակությամբ շշերով կոնյակին, այսինքն վերջնական արտադրանքի տեսք է ունեցել, մնացածը եղել է սպիրտ կամ չշշալցված կոնյակ:

Կոնյակի արտահանումն ըստ երկրների, 2022-2024



Աղբյուր՝ UN Comtrade

Ինչպես և գինու դեպքում, **Ռուսաստանը** շարունակում է մնալ Հայաստանից արտահանվող կոնյակի հիմնական ներմուծողը: 2024 թվականին Հայաստանից արտահանվող կոնյակի 83%-ը ուղարկվել է Ռուսաստան, որին հաջորդում է Բելառուսը՝ 6% մասնաբաժնով:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Հայաստանից խաղողի արտահանումը

Խաղողի արտահանումը բնեղեն արտահայտությամբ, 2022-2024



Աղբյուր՝ Էկոնոմիկայի նախարարություն

Խաղողի արտահանումը արժեքային արտահայտությամբ, 2022-2024



Աղբյուր՝ Էկոնոմիկայի նախարարություն, հեղինակային գնահատումներ

2024 թվականինՀայաստանից արտահանվել է **12,455 տոննա** խաղող: 2022-2024 թվականների ընթացքում խաղողի արտահանումը **նվազել է 29%-ով**:

Հայկական խաղողը գլխավորապես արտահանվում է **Ռուսաստան**:

2024 թվականին Հայաստանից արտահանված խաղողի արժեքը կազմել է 19.3 միլիոն դոլար՝ **28%-ով պակաս**, քան 2022 թվականին:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Հայաստանից չամիչի արտահանումը

Չամիչի արտահանումը բնեղեն արտահայտությամբ, 2022-2024



Աղբյուր՝ Արմստատ

Չամիչի արտահանումը արժեքային արտահայտությամբ, 2022-2024



Աղբյուր՝ Արմստատ

2024 թվականին Հայաստանից չամիչի արտահանումը կազմել է մոտ **8 տոննա՝** 51 հազար դոլար ընդհանուր արժեքով, ինչը համադրելի է 2022 թվականի ցուցանիշի հետ:

2023 թվականին արտահանման կտրուկ աճը հիմնականում պայմանավորված է վերաարտահանման միանվագ գործարքով:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՆՈՒ ԵՎ ԿՈՆՅԱԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

Զբաղվածությունը գինու և կոնյակի արտադրության ոլորտներում

Աշխատողների միջին տարեկան թիվը, 2022-2024



Նշում՝ (1) ներառված են վարձու և քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողները, (2) այն տնտեսավարողները, որոնք որևէ չափով շրջանառություն են գրանցել նշված տնտեսական գործունեությունների մասով, (3) Աշխատակիցների թիվը հաշվարկվել է ընկերության շրջանառության կառուցվածքում տվյալ գործունեության տեսակին համարժեք

Աղբյուր՝ ՊԵԿ

2024 թվականին **գինու և կոնյակի** արտադրության ոլորտում վարձու և պայմանագրային հիմունքներով աշխատողների միջին տարեկան թիվը կազմել է **3,820**, ինչը 16%-ով ավել է, քան նախորդ տարի և 22%-ով ավել, քան 2022 թվականին:

2022-2024 թվականների ընթացքում արձանագրված 22% աճը գլխավորապես պայմանավորված էր կոնյակի արտադրության ոլորտում աշխատողների թվաքանակի աճով:

2024 թվականին **կոնյակի** արտադրության ոլորտում վարձու և պայմանագրային աշխատողների միջին տարեկան թիվը կազմել է 2,716՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 18%-ով, իսկ 2022 թվականի նկատմամբ՝ **21%-ով**:

2024 թվականին **գինու** արտադրության ոլորտում վարձու և պայմանագրային հիմունքներով աշխատողների միջին տարեկան թիվը եղել է 1,104՝ 10%-ով ավել, քան նախորդ տարի և **24%-ով** ավել, քան 2022 թվականին:

Աշխատողների մեջ գերակշռում են վարձու աշխատողները: 2024 թվականին գինու և կոնյակի արտադրության ոլորտում 3,820 աշխատողների միայն **4%-ն** էր աշխատում պայմանագրային հիմունքներով:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Գինու և կոնյակի արտադրության ոլորտների տնտեսավարողներն ըստ աշխատողների թվի

Գինու արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների բաշխումն ըստ աշխատողների թվի, 2024



Նշում՝ (1) ներառված են վարձու և քաղիրավական պայմանագրով աշխատողները, (2) այն տնտեսավարողները, որոնք որևէ չափով շրջանառություն են գրանցել նշված տնտեսական գործունեությունների մասով, (3) ներքին շեմը ներառյալ

Աղբյուր՝ ՊԵԿ

Գինու արտադրությունը դրամական արտահայտությամբ գերակշռում է 206 տնտեսավարող սուբյեկտներից (ԱՁ, ՍՊԸ և այլն) **165-ի** մոտ, որոնցից 25-ը վարձու աշխատող չեն ունեցել, 116-ը՝ ունեցել են մինչև 10 աշխատող, 18-ը՝ 10-30 աշխատող, և միայն 6 տնտեսավարող է ունեցել 30-ից ավել աշխատող:

Կոնյակի արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների բաշխումն ըստ աշխատողների թվի, 2024



Նշում՝ (1) ներառված են վարձու և քաղիրավական պայմանագրով աշխատողները, (2) այն տնտեսավարողները, որոնք որևէ չափով շրջանառություն են գրանցել նշված տնտեսական գործունեությունների մասով (3) ներքին շեմը ներառյալ

Աղբյուր՝ ՊԵԿ

2024 թվականի միջին տարեկան տվյալներով կոնյակի արտադրության ոլորտում գործող **41** տնտեսավարող սուբյեկտներից (ԱՁ, ՍՊԸ և այլն) 18-ն ունեցել են մինչև 10 աշխատող, 8-ը՝ 10-30 աշխատող, իսկ 250 և ավել աշխատող ունեցել են ընդամենը 4 ընկերություն:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Գինու և կոնյակի արտադրություն ունեցող խոշոր գործատուները

Կոնյակի արտադրությամբ զբաղվող 10 խոշոր տնտեսավարողներն ըստ աշխատողների թվի, 2024



Նշում՝ (1)քանի որ տվյալները տրամադրվել են անվանազերծված ձևով, ընկերությունների իրական անվանումները չեն բացահայտվում: «Ընկերություն 1», «Ընկերություն 2» և այլն ձևակերպումները օգտագործվում են ոլորտում գործունեություն իրականացնող առանձին տնտեսավարողներին պայմանականորեն նշելու համար, (2) դեղինով նշված են նույն ընկերությունները

Աղբյուր՝ ՊԵԿ

2024 թվականին կոնյակի արտադրության մեջ ներգրավված ամենաշատ աշխատող ունեցող տնտեսավարողի աշխատողների միջին տարեկան թիվը կազմել է **635**: Այս տնտեսավարողը գործունեություն է իրականացրել նաև գինու արտադրության ոլորտում:

Գինու արտադրությամբ զբաղվող 10 խոշոր տնտեսավարողներն ըստ աշխատողների թվի, 2024



Նշում՝ քանի որ տվյալները տրամադրվել են անվանազերծված ձևով, ընկերությունների իրական անվանումները չեն բացահայտվում: «Ընկերություն 1», «Ընկերություն 2» և այլն ձևակերպումները օգտագործվում են ոլորտում գործունեություն իրականացնող առանձին տնտեսավարողներին պայմանականորեն նշելու համար, (2) դեղինով նշված են նույն ընկերությունները

Աղբյուր՝ ՊԵԿ

Ընդհանուր առմամբ, ըստ աշխատողների թվի 10 խոշոր տնտեսավարողներից հինգը գործունեություն են ծավալել և՛ կոնյակի, և՛ գինու արտադրության ոլորտներում:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Գինու և կոնյակի արտադրության ոլորտներում վճարված աշխատավարձերը

Վճարված աշխատավարձերը և դրանց հավասարեցված վճարումները, 2022-2024



Նշում՝ (1) ներառում է վարձու և քաղիրավական պայմանագրով աշխատողներին վճարված աշխատավաձը և դրան հավասարեցված վճարումները, (2) այն տնտեսավարողներները, որոնք որևէ չափով շրջանառություն են գրանցել նշված տնտեսական գործունեությունների մասով

Աղբյուր՝ ՊԵԿ

2024 թվականին գինու և կոնյակի արտադրության ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարվել են **14 միլիարդ 596 միլիոն դրամի** չափով աշխատավարձեր և դրանց հավասարեցված վճարներ, ինչը 25%-ով ավել է, քան նախորդ տարի և 44%-ով կամ 4 միլիարդ 459 միլիոն դրամով ավել, քան 2022 թվականին:

2024 թվականին **կոնյակի** արտադրության ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարողների կողմից վճարվել է 11 միլիարդ 310 միլիոն դրամի չափով աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ՝ 29%-ով ավել, քան նախորդ տարի և **45%-ով ավել**, քան 2022 թվականին:

2024 թվականին **գինու** արտադրության ոլորտում վճարված աշխատավարձերը և դրանց հավասարեցված վճարումները կազմել են 3 միլիարդ 286 միլիոն դրամ՝ 14%-ով ավել, քան նախորդ տարի և **42%-ով ավել**, քան 2022 թվականին:

2024 թվականին կոնյակի արտադրության ոլորտում **մեկ վարձու աշխատողին** միջինում տարեկան վճարվել է ավելի քան **4 միլիոն դրամի** աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ, իսկ գինու արտադրության ոլորտում՝ շուրջ **3 միլիոն դրամի**: Երկու գործունեությունների մասով միջին տարեկան աշխատավարձը 2022-2024 թվականներին աճել է. կոնյակի արտադրության ոլորտում՝ 45%-ով, գինու արտադրության ոլորտում՝ 42%-ով:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

ԳԻՆՈՒ ԵՎ ԿՈՆՅԱԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԸ

Կոնյակի և գինու արտադրության ոլորտների վճարած հարկերը

Կոնյակի արտադրություն, 2022-2024



Աղբյուր՝ ՊԵԿ, հեղինակային գնահատական

Գինու արտադրություն, 2022-2024

Աղբյուր՝ ՊԵԿ, հեղինակային գնահատական

2024 թվականին կոնյակի արտադրության ոլորտի վճարած հարկեր ու վճարները կազմել են **11 միլիարդ 990 միլիոն դրամ**, ինչը **7%-ով քիչ** է, քան նախորդ տարի և գրեթե համարժեք է 2022 թվականի մակարդակին:

2024 թվականին կոնյակի արտադրության ոլորտի վճարած հարկերը ու վճարները կազմել են **2 միլիարդ 573 միլիոն դրամ**, ինչը փոքր-ինչ ավել է, քան նախորդ տարի և **30%-ով ավել**, քան 2022 թվականին:

2024 թվականին գինու և կոնյակի արտադրության ոլորտների վճարած հարկերը Հայաստանի ընդհանուր հավաքագրված հարկերի կառուցվածքում կազմել է **0.5%**:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Գինու և կոնյակի արտադրության ոլորտի խոշոր հարկատուները

Գինու և կոնյակի արտադրության ոլորտի խոշոր հարկատուները, 2024



Աղբյուր՝ ՊԵԿ, 1000 խոշոր հարկուտների ցանկ, Նշում՝ առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի մասով՝ միասնական հաշիվ վերադարձված գումարների

2024 թվականին գինու և կոնյակի արտադրության ոլորտի ամենախոշոր հարկատուն **Երևանի կոնյակի գործարանն** էր, որին հաջորդում են Պռոշյանի կոնյակի գործարանը և Վեդի Ալկոն:

2024 թվականին Երևանի կոնյակի գործարանը վճարել է 4 միլիարդ 118 միլիոն դրամի հարկեր և վճարներ (առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի մասով վերդարձված գումարների), ինչը 12%-ով ավելի քիչ է, քան նախորդ տարի:

Պռոշյանի կոնյակի գործարանի և Վեդի Ալկոյի վճարած հարկերը և վճարները նախորդ տարվա նկատմամբ ավելացել են՝ համապատասխանաբար 93%-ով և 50%-ով:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

ԳԻՆՈՒ ԵՎ ԿՈՆՅԱԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Գինու և կոնյակի արտադրության ոլորտների շրջանառությունը

Տնտեսավարողների իրացման շրջանառությունը, 2022-2024



Նշում՝ այն տնտեսավարողները, որոնք որևէ չափով շրջանառություն են գրանցել նշված տնտեսական գործունեությունների մասով
Աղբյուր՝ ՊԵԿ

2024 թվականին **կոնյակի** արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների իրացման շրջանառությունը կազմել է 127 միլիարդ դրամ, **9%-ով ավել**, քան 2023 թվականին և շուրջ **15%-ով** ավել, քան 2022 թվականին:

2024 թվականին **գինու** արտադրությամբ զբաղվող տնտեսավարողների իրացման շրջանառությունը կազմել է 17 միլիարդ դրամ, **13%-ով ավել**, քան 2023 թվականին և **30%-ով** ավել, քան 2022 թվականին:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Կոնյակի արտադրության ոլորտի խոշոր տնտեսավարողները

Կոնյակի արտադրությամբ զբաղվող 10 խոշոր տնտեսավարողներն ըստ իրացման շրջանառության, 2024



2024 թվականին կոնյակի արտադրությամբ զբաղվող 42 տնտեսավարողներից **10-ն ապահովել են ոլորտի ամբողջ շրջանառության 84%-ը**:

Ըստ իրացման շրջանառության ամենախոշոր ընկերության շրջանառությունը 2024 թվականին կազմել է **33 միլիարդ դրամ:** Այս ընկերությունը ապահովել է այդ տարի կոնյակի արտադրության ոլորտի ամբողջ հասույթի **26%-ը**:

Ընդհանուր առմամբ 2024-ին նախորդ տարվա համեմատ 10-յակում հայտնված ընկերությունների իրացման շրջանառությունը **աճել է 24%-ով**, ինչը գլխավորապես պայմանավորված էր երկու ընկերությունների իրացման շրջանառության աճով (Ընկերություն 4, Ընկերություն 3): Մեր գնահատմամբ՝ այդ երկու ընկերություններն առավելապես զբաղված են կոնյակի սպիրտի արտահանմամբ:

Նշում՝ քանի որ տվյալները տրամադրվել են անվանազերծված ձևով, ընկերությունների իրական անվանումները չեն բացահայտվում: «Ընկերություն 1», «Ընկերություն 2» և այլն ձևակերպումները օգտագործվում են ոլորտում գործունեություն իրականացնող առանձին տնտեսավարողներին պայմանականորեն նշելու համար

Աղբյուր՝ ՊԵԿ

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Գինու արտադրության ոլորտի խոշոր տնտեսավարողները

Գինու արտադրությամբ զբաղվող 10 խոշոր տնտեսավարողներն ըստ իրացման շրջանառության, 2024



2024 թվականին գինու արտադրությամբ զբաղվող 172 տնտեսավարողներից **10-ն ապահովել են ոլորտի ամբողջ շրջանառության 68%-ը**:

Ըստ իրացման շրջանառության ամենախոշոր ընկերության շրջանառությունը 2024 թվականին կազմել է **2 միլիարդ 420 միլիոն դրամ**: Այս ընկերությունը ապահովել է այդ տարի գինու արտադրության ոլորտի ամբողջ շրջանառության **14%-ը**:

Ընդհանուր առմամբ 2024-ին նախորդ տարվա համեմատ 10-յակում հայտնված ընկերությունների իրացման շրջանառությունը **աճել է 28%-ով**, ինչը գլխավորապես պայմանավորված էր երկու ընկերությունների իրացման շրջանառության աճով (Ընկերություն 3, Ընկերություն 4):

Նշում՝ քանի որ տվյալները տրամադրվել են անվանազերծված ձևով, ընկերությունների իրական անվանումները չեն բացահայտվում: «Ընկերություն 1», «Ընկերություն 2» և այլն ձևակերպումները օգտագործվում են ոլորտում գործունեություն իրականացնող առանձին տնտեսավարողներին պայմանականորեն նշելու համար

Աղբյուր՝ ՊԵԿ

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Ակցիզային հարկը և Հայաստանի կոնյակի շուկայի ծավալը

Կոնյակի ներմուծողների և տեղական արտադրողների կողմից հաշվեգրված ակցիզային հարկը, 2022-2024



Աղբյուր՝ ՊԵԿ, հեղինակային գնահատական

2024 թվականին կոնյակի ներմուծողների և տեղական արտադրողների կողմից հաշվեգրված ակցիզային հարկի մեծությունը կազմել է **3 միլիարդ 769 միլիոն դրամ**, ինչը 28%-ով ավել է, քան նախորդ տարի և 49%-ով ավել, քան 2022 թվականին:

Կոնյակի շուկայի ծավալը Հայաստանում, 2022-2024



Աղբյուր՝ ՊԵԿ, հեղինակային գնահատական

ՊԵԿ-ի տրամադրած տվյալների հիման վրա իրականացված հեղինակային գնահատականները ցույց են տալիս, որ 2024 թվականին **կոնյակի շուկայի ծավալը կազմել է 785 հազար լիտր**՝ 38%-ով ավելի, քան նախորդ տարի:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Ակցիզային հարկը և Հայաստանի գինու շուկայի ծավալը

Գինի ներմուծողների և տեղական արտադրողների կողմից հաշվեգրված ակցիզային հարկը, 2022-2024



Աղբյուր՝ ՊԵԿ, հեղինակային գնահատական

Գինու շուկայի ծավալը Հայաստանում, 2022-2024



Աղբյուր՝ ՊԵԿ, հեղինակային գնահատական

2024 թվականին գինի ներմուծողների և տեղական արտադրողների կողմից հաշվեգրված ակցիզային հարկի մեծությունը կազմել է **774 միլիոն դրամ**, ինչը 2%-ով ավել է, քան նախորդ տարի և 14%-ով ավել, քան 2022 թվականին:

ՊԵԿ-ի տրամադրած տվյալների հիման վրա իրականացված հեղինակային գնահատականները ցույց են տալիս, որ 2024 թվականին **գինու շուկայի ծավալը կազմել է 4 միլիոն 345 հազար լիտր՝** 6%-ով ավելի քիչ, քան նախորդ տարի և 2%-ով ավել, քան 2022 թվականին:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

ԽԱՂՈՂԻ ԱՐԺԵԾՂԹԱՅԻ ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԸ

Համախառն ավելացված արժեքը խաղողի արժեշղթայում

Խաղողի արժեշղթայում գեներացված ավելացված արժեքը ընթացիկ գներով, 2022-2024



Աղբյուր՝ Արմստատ, Armenian Brandy Project, հեղինակային հաշվարկներ

2024 թվականին՝ ընթացիկ գներով, խաղողի արժեշղթայում **ավելացված արժեքը գնահատվում է 49.4 միլիարդ դրամ**, ինչը համարժեք է Հայաստանի համախառն ավելացված արժեքի 0.5%-ին, համեմատության համար 2022 թվականին այդ ցուցանիշը եղել է 1.1%:

Ժամանակագրական շարքի ուսումնասիրությունը, ցույց է տալիս որ դիտարկվող ժամանակահատվածում և՛ ոլորտի թողարկումն է կրճատվել (հիմնական գներով), և՛ այլ ոլորտներն են ավելի մեծ տեմպերով աճել, ինչի արդյունքում խաղողի արժեշղթայի մասնաբաժինը տնտեսության կառուցվածքում նվազել է:

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

DEUTSCHE GESELLSCHAFT FÜR INTERNATIONALE ZUSAMMENARBEIT (GIZ) GMBH

Registered offices, Bonn and Eschborn

Friedrich-Ebert-Allee 32 + 36
53113 Bonn, Germany

T +49 228 44 60 - 0
F +49 228 44 60 - 17 66

Dag-Hammarskjöld-Weg 1 - 5
65760 Eschborn, Germany

T +49 61 96 79 - 0
F +49 61 96 79 - 11 15

E info@giz.de
I www.giz.de

Implemented by:

giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH